ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Թեթև արդյունաբերության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իր իրավասությունների շրջանակներում ապահովում է նախարարությանը օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամաններով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության թեթև և ստեղծագործ արդյունաբերության զանգացման քաղաքականության մշակումը, իրականացումը, համակարգումը և գնահատումը:

6. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների մրցունակության բարձրացումը և արտահանման խթանումը,

2) թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների արտադրողականության և մասնագիտական ունակությունների բարելավում

3) «Արտադրված է Հայաստանում» ապրանքանիշի առաջմղումը,

4) պետություն-մասնավոր հատված համագործակցություն արդյունավետության բարձրացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետության թեթև և ստեղծագործ արդյունաբերության զարգացման ռազմավարության, միջոցառումների և պետական աջակցության ծրագրերի մշակում և իրականացում,

2) ոլորտային և ճյուղային քննարկումների միջոցով արդյունաբերական զարգացման խոչընդոտների վերհանում և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում,

3) թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության մեխանիզմների, ուղղությունների և գործողությունների մշակում,

4) իր իրավասության սահմաններում իրականացնում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության գործունեության մոնիտորինգի իրականացում, կոնկրետ ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանում և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում,

5) թեթև և ստեղծագործ արդյունաբերության բնագավառում պետական և մասնավոր հատվածի համագործակցության երկխոսության մեխանիզմների ձևավորում և ապահովում, պետական գործառնություններում մասնավոր հատվածի դերի բարձրացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

6) թեթև և ստեղծագործ արդյունաբերության ներուժի ընդլայնման և մրցունակության բարձրացման, տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականության մշակում և իրականացում,

7) տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառման ապահովում,

8) թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտներում արտահանման խոչընդոտների վերհանում, դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում,

9) հետադարձ կապի ապահովում գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ վերջինիս հետ իրավական ակտերի նախագծերին և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումների իրականացում,

10) մասնակցություն թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտներում ներդրումների ներգրավման քաղաքականության մշակմանը՝ համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ համագործակցությամբ

11) իր իրավասությունների սահմաններում օրենսդրությամբ նախատեսված պետական աջակցության և արտոնությունների տրամադրման գործընթացի ապահովում,

12) զարգացած և զարգացող երկրների թեթև և ստեղծագործ արդյունաբերության զարգացման համար կիրառվող միջոցների և մոտեցումների վերլուծության իրականացում, դրանց հիման վրա համապատասխան եզրակացությունների ու առաջարկությունների ներկայացում,

13) մասնակցություն մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը

14) մասնակցություն միջազգային շուկաներում Հայաստանի Հանրապետության թեթև և ստեղծագործ արդյունաբերության մրցունակության բարձրացման քաղաքականության մշակմանը,

15) մասնակցություն տեխնոլոգիական զարգացմանն համընթաց առաջացող գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերի մշակմանը,

16) մասնակցություն թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների արտաքին շուկաների ուսումնասիրմանն ու վերլուծությանը, տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը

17) մասնակցություն կազմակերպությունների ստեղծման, կտրուկ աճին նպաստող գործարար միջավայրի ձևավորմանը, գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտմանը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում,

18) ոլորտի ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգում, վերլուծություն, արձագանքում, առաջարկությունների մշակում և ներկայացում նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, շահագրգիռ պետական մարմիններին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

19) իրականացված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ոլորտի ներկայացուցիչներին ծանուցման իրականացում.

20) համագործակցություն պետական և միջազգային կառույցների հետ՝ իր իրավասությունների սահմաններում,

21) իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթների իրականացում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից՝

1) Թեթև արդյունաբերության զարգացման բաժին,

2) Ստեղծագործ արդյունաբերության զարգացման բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Վարչության **թեթև արդյունաբերության զարգացման բաժնի** գործառույթներն են՝

1) թեթև արդյունաբերության ոլորտի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակում,

2) թեթև արդյունաբերության ոլորտի զարգացմանը ուղղված միջոցառումներ մշակում և իրականացում,

3) ոլորտի շարունակական ուսումնասիրություն՝ զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման նպատակով,

4) թեթև արդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի բարելավումը ապահովող համակարգերի ներդրման և օրենսդրական դաշտում փոփոխությունների իրականացնման առաջարկությունների մշակում և ներկայացում նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, շահագրգիռ պետական մարմիններին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

5) մասնակցություն թեթև արդյունաբերության ոլորտի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանմանը, քաղաքականության մշակմանը և առաջարկությունների ներկայացմանը,

6) հետադարձ կապի ապահովում գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումների իրականացնում,

7) գործարար համայնքին օրենսդրական փոփոխությունների, կազմակերպված միջոցառումների և այլնի վերաբերյալ ծանուցումների իրականացնում,

8) մասնակցություն պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային ծրագրերի մշակմանը և իրականացմանը՝ իր իրավասությունների սահմաններում,

9) թեթև արդյունաբերության ոլորտին առնչվող այլ գործառույթների իրականացում:

11. Վարչության **ստեղծագործ արդյունաբերության զարգացման** բաժնի գործառույթներն են՝

1) ստեղծագործ արդյունաբերության ենթաճյուղերի վերլուծություն, միջազգային փորձի ուսումնասիրություն և կիրառում հայկական շուկայում,

2) ստեղծագործ արդյունաբերության ոլորտի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակում, աջակցության ծրագրերի մշակում,

3) ստեղծագործ արդյունաբերության ոլորտի զարգացմանը ուղղված միջոցառումների մշակում և իրականացում, խնդիրների վերհանում,

4) ոլորտի շարունակական ուսումնասիրություն՝ զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման նպատակով,

5) ստեղծագործ արդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի բարելավումը ապահովող համակարգերի ներդրման և օրենսդրական դաշտում փոփոխությունների իրականացնման առաջարկությունների մշակում և ներկայացում նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, շահագրգիռ պետական մարմիններին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

6) մասնակցություն ստեղծագործ արդյունաբերության ոլորտի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանմանը, քաղաքականության մշակմանը և առաջարկությունների ներկայացմանը,

7) հետադարձ կապի ապահովում գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումների իրականացնում,

8) գործարար համայնքին օրենսդրական փոփոխությունների, կազմակերպված միջոցառումների և այլնի վերաբերյալ ծանուցումների իրականացնում,

9) մասնակցություն պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային ծրագրերի մշակմանը և իրականացմանը՝ իր իրավասությունների սահմաններում,

10) ստեղծագործ արդյունաբերության ոլորտին առնչվող այլ գործառույթների իրականացում:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13.Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14.Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետին:

16.Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:»